



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՍ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՈՒՄ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐՐԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱԵՆԱՐ

ԿԻՐԱԿԻ, 10 Նոյեմբեր 2019

136

DIMANCHE, 10 Novembre 2019

Տօն Սրբոց Հրեշտակապետացն
Գաբրիէի և Միքայէի
և ամենայն երկնային զօրացն
Fête des Saints archanges
Gabriel et Michel
et de toutes les nuissances célestes



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Թ Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին
9^{ÈME} DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (5.15-33)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (8.49-56)

Les lectures de la Bible d'aujourd'hui

ÉPHÉSIENS 1.15-33

LUC 8.49-56

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ. ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ Ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

Յաւարտ Ս. Պատարագի պիտի կատարուի
«Արեւշատութեան Մաղթանք»
Տիկնանց Յանձնախումբին եւ Օժանդակներուն
համար

DIACRES – ACOLYTES

Chef de choeur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Houry Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԵՓԵՍՍՑԻՆԵՐ 5.15-33

15 Ուրեմն զգուշացէ՛ք որ ընթանաք շրջահայեցուբեամբ. ո՛չ թէ ակխոհեմներու պէս, 16 հապա՛ իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը, որովհետև օրերը չար են: 17 Ուստի անմիտ մի՛ ըլլաք, հապա հասկցէ՛ք թէ ի՛նչ է Տէրոջ կամքը: 18 Մի՛ արբենաք գինիով՝ որուն մէջ անառակութիւն կայ, հապա Յոգիով՝ լեցուեցէք: 19 Սաղմոսներով, օրհներգերով եւ հոգեւոր երգերով դուք ձեր մէջ խօսակցելով՝ երգեցէ՛ք ու սաղմո՛ս ըսէք Տէրոջ ձեր սիրտերուն մէջ: 20 Ամեն ատեն՝ ամեն բանի համար շնորհակա՛լ եղէք Աստուծմէ եւ Հօրմէն, մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի անունով: 21 Իրարու հպատակեցէ՛ք Աստուծոյ վախով: 22 Կիներ, հպատակեցէ՛ք ձեր ամուսիններուն՝ որպէս թէ Տէրոջ. 23 որովհետև ամուսինը կնոջ գլուխն է, ինչպէս Զրիստոս ալ եկեղեցիին գլուխն է, եւ ինքն է մարմինին Փրկիչը: 24 Հետեւաբար, ինչպէս եկեղեցին հպատակ է Զրիստոսի, նոյնպէս ալ կիները թող ըլլան իրենց ամուսիններուն՝ ամեն բանի մէջ: 25 Ամուսիններ, սիրեցէ՛ք ձեր կիները, ինչպէս Զրիստոս ալ սիրեց եկեղեցին եւ ընծայեց ինքզինք անոր համար, 26 որպէսզի սրբացնէ զայն ու մաքրէ ջուրի լուսցումով՝ խօսքին միջոցով. 27 որպէսզի ներկայացնէ զայն իրեն՝ իբր փառաւոր եկեղեցի մը, որ չունենայ բիծ, կամ կնճիռ, կամ նման որեւէ բան, հապա ըլլայ սուրբ եւ անարատ: 28 Նոյնպէս ալ ամուսինները պարտաւոր են սիրել իրենց կիները՝ իրենց մարմիններուն պէս. ան որ կը սիրէ իր կինը՝ կը սիրէ ինքզինք: 29 Արդարեւ ո՛չ մէկը երբեք ատած է իր մարմինը, հապա կը կերակրէ զայն ու կը փայփայէ, ինչպէս Տէրն ալ՝ եկեղեցին. 30 քանի որ մենք անոր մարմինին անդամներն ենք, անոր միսն է անոր ոսկորներէն: 31 «Ատոր համար մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին»: 32 Ասկա մեծ խորհուրդ մըն է. բայց ես կը խօսիմ Զրիստոսի եւ եկեղեցիին մասին: 33 Սակայն ձեզմէ իւրաքանչիւրը թող սիրէ իր կինը այնպէս՝ ինչպէս ինքզինք, ու կինը թող ակնածի իր ամուսինէն:

ՄԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8.49-56

49 Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովարանի պետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, ա՛լ մի՛ անհանգստացներ վարդապետը»: 50 Բայց երբ Յիսուս լսեց ասիկա՝ ըսաւ անոր. «Մի՛ վախնար, միայն հաւատա, ու պիտի ապրի»: 51 Երբ տունը մտաւ, ո՛չ մէկուն թոյլ տուաւ որ մտնէ, բայց միայն՝ Պետրոսի, Յակոբոսի ու Յովհաննէսի, եւ աղջիկին հօր ու մօր: 52 Բոլորն ալ կու լային եւ կը հեծօծէին անոր վրայ. բայց ինք ըսաւ. «Մի՛ լաք. ան մեռած չէ, հապա կը քնանայ»: 53 Անոնք ալ զինք ծաղրեցին, քանի գիտէին թէ մեռաւ: 54 Իսկ ինք բոլորն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն, ու գոչեց՝ ըսելով. «Աղջի՛կ, ոտքի՛ ելիր»: 55 Անոր հոգին վերադարձաւ, եւ ան անմիջապէս կանգնեցաւ: Յիսուս հրամայեց՝ որ անոր ուտելիք տան: 56 Անոր ծնողները զմայլած մնացին, եւ ինք պատուիրեց անոնց՝ որ պատահածը ո՛չ մէկուն ըսեն:

Éphésiens 5.15-33

15Prenez donc garde comment vous vous conduirez soigneusement, non point comme étant dépourvus de sagesse, mais comme étant sages : 16Rachetant le temps : car les jours sont mauvais. 17C'est pourquoi ne soyez point sans prudence, mais comprenez bien quelle est la volonté du Seigneur. 18Et ne vous enivrez point du vin auquel il y a de la dissolution; mais soyez remplis de l'Esprit. 19Vous entretenant par des Psaumes, des cantiques et des chansons spirituelles; chantant et psalmodiant de votre cœur au Seigneur. 20Rendant toujours grâces pour toutes choses au Nom de notre Seigneur Jésus-Christ [à notre] Dieu, et Père. 21Vous soumettant les uns aux autres, en la crainte de Dieu.

22Femmes soyez soumises à vos maris, comme au Seigneur. 23Car le mari est le chef de la femme, comme Christ est le chef de l'Eglise, et il est aussi le Sauveur de [son] Corps. 24Comme donc l'Eglise est soumise à Christ, que les femmes le soient de même à leurs maris, en toutes choses.

25[Et] vous maris, aimez vos femmes, comme Christ a aimé l'Eglise, et s'est donné lui-même pour elle. 26Afin qu'il la sanctifiât, après l'avoir nettoyée dans le baptême d'eau et par sa parole : 27Afin qu'il se la rendît une Eglise glorieuse, n'ayant ni tache, ni ride, ni autre chose semblable, mais afin qu'elle fût sainte et irrépréhensible. 28Les maris donc doivent aimer leurs femmes comme leurs propres corps; celui qui aime sa femme s'aime soi-même. 29Car personne n'a jamais eu en haine sa propre chair, mais il la nourrit et l'entretient, comme le Seigneur entretient l'Eglise. 30Car nous sommes membres de son corps, étant de sa chair, et de ses os. 31C'est pourquoi l'homme laissera son père et sa mère, et il s'unira à sa femme, et les deux seront une même chair. 32Ce mystère est grand, or je parle de Christ et de l'Eglise. 33Que chacun de vous aime donc sa femme comme soi-même; et que la femme révère son mari.

Luc 8.49-56

49Et comme il parlait encore, quelqu'un vint de chez le Principal de la Synagogue, qui lui dit : ta fille est morte, ne fatigue point le Maître. 50Mais Jésus l'ayant entendu, répondit au père de la fille, disant : ne crains point; crois seulement, et elle sera guérie. 51Et quand il fut arrivé à la maison, il ne laissa entrer personne, que Pierre, et Jacques, et Jean, avec le père et la mère de la fille. 52Or ils la pleuraient tous, et de douleur ils se frappaient la poitrine; mais il leur dit : ne pleurez point, elle n'est pas morte, mais elle dort. 53Et ils se riaient de lui, sachant bien qu'elle était morte. 54Mais lui les ayant tous mis dehors, et ayant pris la main de la fille, cria, en disant : Fille, lève toi. 55Et son esprit retourna, et elle se leva d'abord; et il commanda qu'on lui donnât à manger. 56Et le père et la mère de la fille en furent étonnés, mais il leur commanda de ne dire à personne ce qui avait été fait.





Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն:

**«Մի վախնար, այլ միայն հաւատայ »
(Ղուկասու 8 : 50)**

Յարգելի՛ հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ,

Օրուան աստուածաշնչեան ընթերցումը Հայրոսի աղջկան Յարութեան եւ տեռատես կնոջ բժշկութեան մասին է: Հայրոսը ժողովրդապետ էր, որ եկաւ Երիստոսի ոտքերուն իյնալով աղաչեց, որ գայ իր տունը եւ բժշկէ իր միսուճար աղջիկը, որ մահամերձ է: Իսկ երթալու ընթացքին տասներկու տարի արիւնահոսութեամբ տառապող տեռատես կինը, որ «հնարաւոր չէր եղած անոր որեւէ մէկէն բժշկուիլ», կը մօտենայ Յիսուսին, կը դաչի Անոր հագուստին քղանցքին եւ կը բժշկուի: Երիստոս կը զգայ, որ Իրմէ զօրութիւն դուրս եկաւ, յատուկ դիտաւորութեամբ կը հարցնէ, թէ ո՞վ Իրեն դպաւ: Կինը, տեսնելով, որ իր արարքը գաղտնի չմնաց, բոլորին առջեւ բարձրաձայն կը պատմէ, թէ ինչպէս դաչելով Տիրոջը բժշկուեցաւ: Երիստոս ջանդիմանեց անոր, այլ գօտեպնդեց. «Քաջալերուի՛ր, դո՛ւստր, քո հաւատքդ փրկեց քեզ, գնայ՛ խաղաղութեամբ» (Ղուկաս 8:48): Այդ ընթացքին ժողովրդապետի տունէն կու գան եւ կը տեղեկացնեն Հայրոսին, թէ աղջիկը մահացաւ, կարելի է այլեւս պէտք չէ անհանգստացնել Յիսուսին: Տերը կը լսէ այդ եւ կ'ըսէ. «Մի՛ վախնար, այլ միայն հաւատայ՛, եւ ան կ'ապրի» (Ղուկաս 8:50): Երթալով Հայրոսի

տուևը՝ միայն ծնողներուն թոյլ կու տայ սենեակին մէջ մնալ, կը բռնէ աղջկան ձեռքէն եւ կ'ըսէ, որ աղջիկը կանգնի: Եւ ան յարուբիւն կ'ամռնէ: Յիսուս կը պատուիրէ, որ անոր հաց տան: Աւետարանական այս հատուածը կը զօրացնէ մեզ մեր հաւատքին մէջ եւ միաժամանակ հաղորդակից կը դարձնէ աստուածային ճշմարտութիւններուն: Այս Տիրոջ կատարած հերթական բժշկութիւններէն էր, հերթական քարոզը Ամենակարող Աստուծոյ նկատմամբ ունեցած մարդկային հաւատքի մասին: Բազմաթիւ են Տիրոջ բժշկութիւններն ու հրաշագործութիւնները, որոնց մասին կը պատմեն աւետարանիչները, իւրաքանչիւրը իր արժանի տեղն ունի Աւետարանին մէջ յիշատակելու եւ կրթելու մեզ՝ ապահովելով մեր հոգեւոր յառաջընթացը: Այս երկու պատմութիւնները Աստուածային սիրոյ արտայայտութիւնն են մարդու կեանքին մէջ: Զրիստոս, մարդոց հաւատքը տեսնելով, կը բժշկէր անոնց: Նոր կտակարանին մէջ հիւանդներու պարագային կը տեսնենք, որ կամ մարդիկ իրենք իրենց համար կը խնդրեն Յիսուսէն, կամ անոնց բարեկամներն ու հարազատները անոնց կը բերեն Զրիստոսին մօտ: Ցանկացուած խնդրի ու խնդրանքի համար Աստուած միշտ ականջալուր է մեզի, գտնելով լուծում ամէն հարցի եւ ամէն ցաւի ու տառապանքի բժշկութիւն Տիրոջ ուղեւորուն առջեւ: Հիւանդ կնոջ պարագային Զրիստոս ճամբուն վրայ իմացաւ եւ նոյն միջոցին կինը բժշկուեցաւ եւ ան ուղղակի փափաք յայտնեց, որ մարդիկ իմանան կնոջ հաւատքին մասին: Այդ հիւանդութիւնը անոր համար տարիներ շարունակ անէծք դարձած էր եւ խոչընդոտ հանդիսացած անոր տաճար մտնելուն, որուն պատճառով ան շարունակ զրկուած կը մնար Աստուծոյ օրհնութենէն: Վերջապէս ան կը բժշկուի եւ կը փառաբանէ Աստուծոյ: Տերը կը գովէ անոր հաւատքը, որ այդ բժշկութեան եւ մեծագոյն օրհնութեան առիթ կը դառնայ:

Իսկ Զրիստոս տեսնելով Հայրոսի տխրութիւնը՝ կը հանգստացնէ զինք եւ Ան կ'երթայ եւ յարուբիւն կու տայ անոր աղջկան՝ ցոյց տալով, որ Աստուծոյ կողմէ ոչ ոք անտեսուած չէ, Աստուած կը լսէ եւ մինչեւ մեր խնդրելը գիտէ, թէ մեզի ինչն է անհրաժեշտ: Միայն հարկաւոր է հաւատալ Արարիչին, որ Ան կրնայ մեզ բժշկել, կերակրել, ապրեցնել եւ վերջապէս փրկել մեզի՝ անոր դիմաց ակնկալելով միայն հաւատք: Յիսուս Զրիստոսի փրկարար զօրութիւնը՝ նախապէս մարդիկ լսելով ու

տեսնելով է, որ կը սպասէին Անոր: Այս անտարանական պատումը կը ցուցանէ Աստուծոյ նուիրումը մարդուն, որ Աստուած չզլացաւ երթալ դէպի մարդը՝ բժշկելու, յարութիւն պարգեւելու եւ փրկելու զայն: Մեր հաւատքի կեանքին մէջ եւս կը պատահի այնպիսի անհաւատալի երեւոյթ, որոնցմէ մէկը այն ծառան է, որ կը յայտնէ Հայրոսին աղջկան մահուան բօթը: Կրնայ ըլլալ նմանատիպ անհաւատարմութեան դրսեւորումներ մեր հաւատքի ճանապարհին վրայ, որոնք կրնան մեզ տկարացնել, ձգել յուսահատութեան մէջ, համոզել մեզ, որ այլեւս յոյս չկայ: Սակայն հարկ է, որ մենք շարունակենք չտարակուսիլ մեր հաւատքին վրայ, Աստուծոյ ապաւինելով, չվախնանք կեանքի փորձութիւններէն ու դառնութիւններէն, դժուարութիւններէն, այլ միայն հաւատանք եւ ապրինք: Անոնք որոնք չեն հաւատար Աստուծոյ, զրկուած են Աստուծոյ օրհնութիւններէն ու շնորհքներէն, իսկ մեզի համար մեր հաւատքը կենսապարգեւ զօրութիւն մըն է, որուն շնորհիւ մենք կ'ապրինք Աստուծոյ օրհնութեան ու հոգածութեան տակ: Երբ Պետրոս առաքեալ խնդրեց Յիսուսէն, որ օգնէ իրեն, որպէսզի ինքն ալ կարողանայ ծովի վրայով քալել, Զրիստոս «ըսաւ՝ եկուր': Եւ Պետրոսը նաւակէն իջնելով՝ քալեց ջրի վրայով ու եկաւ Յիսուսին մօտ: Սակայն տեսնելով ուժգին քամին՝ վախցաւ: Եւ երբ սկսաւ սուզուիլ, աղաղակեց ու ըսաւ. «Տէ՛ր, փրկէ՛ ինձ»: Եւ իսկոյն Յիսուս երկարեց իր ձեռքը, բռնեց անոր ու ըսաւ. «Թերահաւա՛տ, ինչո՞ւ երկմտեցար» (Մատթեոս 14:29-31): Այդ ալ իր հերթին վկայութիւն մըն է այն մասին, որ մարդոց կեանքին մէջ պատահող փոթորիկները կրնան սարսափեցնել զանոնք եւ այդ պատճառով անոնք կրնան երկմտիլ: «Մի՛ վախնասար, այլ միայն հաւատայ՛», – կ'ըսէ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Զրիստոս: Այդ մշտապէս պետք է ըլլայ մեր միտքին ու գիտակցութեան մէջ, որպէսզի Աստուած իր բարիքներուն մեզի մասնակից դարձնէ ու արժանացնէ իր օրհնութիւններուն ու փրկագործութեան: Մեզ՝ Զրիստոնեաներս, կը միաւորէ հաւատքն առ Աստուած: Սակայն ուշադրութիւն դարձնենք մասնաւորաբար այն կետին, որ մեր հաւատքը ներշնչանք չէ: Հաւատքը մեր կեանքի հիմնասիւնն է: Հաւատքն առ Աստուած այն է, որ մեր Տէրը կը սպասէ մեզմէ, որովհետեւ Ան երբեք չի հարկադրեր մեզի հաւատքն ու սէրը: Ճշմարիտ Աստուծոյ նկատմամբ հաւատքը մեզ կ'ապրեցնէ այս կեանքին մէջ եւ յաւիտենական կեանքի ու հոգիի փրկութեան յոյս կը պարգեւէ:

Սիրելիներ, եկեք ունայն ու սին բաներու ետեւէ չիյնանք, այլ հաւատանք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Զրիստոսին, որպէսզի չվախնանք այս աշխարհին մէջ կատարուող զանազան իրողութիւններէն ու սատանայական երեւոյթներէն: Ոչ թէ աշխարհիկ բոլոր միջոցներուն, դեղ ու դարմաններուն դիմելէն յետոյ յիշենք Աստուծոյ, այլ մեր ամենաառաջին յոյսը թող ըլլայ Ան, քանի որ մենք կը հաւատանք Անոր: Շնորհք, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանս. Ամէն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

Շարքուայ խորհրդածութիւնը

- «Իւրաքանչիւր մարդ ունի իր առաջադրանքը երկրի վրայ: Ամէն տերեւ, ամէն խոտ, ամէն ծաղիկ ունի իր առաջադրանքը, որ պէտք է իրականացն է: Մենք կ'աշխատիւք, բայց Աստուած կը դրոշէ, թէ ինչ տեղի կ'ունենայ մեր կեաքին մէջ եւ ինչպէս: Եւ երբ մենք շնորհակալ կ'ըլլանք Անոր մեր կարգավիճակին համար, ապա ամէն ինչ կը ստացուի մեր մօտ: Ոչինչ անտեսուած է, ամէն ինչ կարելոր է»:

Թաղեսու վրդ. Վիդովիցքի

- Մի՛ դատեր եւ մի՛ նեղացներ մարդոց: Ինչ որ ալ անոնք ընեն քեզ, մի՛ ատեր ուէ մէկուն: Իւրաքանչիւր անձ կը գործէ այնպէս, ինչպէս սորվեցուցած են անոր եւ ինչպիսին է իր խառնուաքը: Բոլորը չէ որ ունին բարութիւն եւ դատողութիւն:

Չերոնիմոս Էգիւսացի



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ՌԻՍԱՆՈՂԻ ԱՂՕԹՔ

Արարիչ անճառելի եւ աղբիւր
 ճշմարիտ լոյսի ու իմաստութեան,
 լուսաւորէ իմ միտքս պայծառութեան
 նշոյլով եւ մաքրէ իմ մէջէս
 անգիտութեան խաւարը:
 Դո՛ւն, որ մանուկ երեխաներու
 լեզուներուն մէջ պարզախօսութիւն
 կը դնես, վարժեցուր իմ լեզուիս եւ
 թու շնորհներուդ օրհնութեամբ
 լեցուր շրթուներս:
 Տո՛ւր զօրութիւն ճանչալու,
 ընդունակութիւն՝ պահելու,
 կորովամտութիւն՝ մեկնաբանելու,
 դիւրընկալութիւն՝ ուսանելու,
 ինչպէս նաև՝ առատապէս
 շնորհախօսելու:
 Պատրաստ եւ հարդարէ իմ
 մուտքս (այս կեանք), ուղղէ ընթացքս
 եւ աւարտին հասցուր կեանքս իմ
 դէպի քրիստոս Յիսուս՝ Տէրը: Ամէն:



St. John Mantakuni

A Double Prayer for the Early Morning We give you thanks, O Lord our God, who have awakened us from restless sleep by the grace of your mercy. Awaken our minds in righteousness for you, Lord our God, so that our eyes may see your salvation. May your divinity come and abide in us, and may your mercy shelter and protect your servants. By day and by night and at all times make us, your servants, reflect always on the love of your commandments, in thanksgiving to glorify the Father and the Son and the Holy Spirit. Now and always and unto the ages of ages. Amen. You are the life-giving Power and the Source of immortality, Christ God, our Savior. You have granted us to rise in the middle of the night and to confess to you regarding your statutes and righteousness. And now we ask you, Lord our God, make us vigilant and ready with your saints at the morning hour, and giving thanks with them, let us glorify you with the Father and the Holy Spirit. Now and always and unto the ages of ages. Amen.

St. Hovhannes Mantakuni (ca. 420-490) was a well-educated and venerable Catholicos of the Armenian Church. His name is frequently mentioned as a principal figure in the development of the liturgical books of the Armenian Church: the Book of Hours (Zhamagirk'), the Book of Hymns (Sharaknots'), and the Ritual Book (Mashtots').

The ancient prayer above is recited during the Night Service, conducted before sunrise.

ՏՕՆԵՐ



Շաբաթ, 9 Նոյեմբեր 2019

ՀՐԵՏԱԿԱՊԵՏԵՐ

ԳԱԲՐԻԷԼԻ ԵՒ ՄԻԿԱՅԷԼԻ

ԵՒ ՈՂՋ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԻ ՑԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ

Հայ եկեղեցւոյ Հրեշտակաբանութեան համաձայն՝ հրեշտակները անմարմին գոյացութիւններ են, իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անսեռ, անմահ եւ սպասաւոր Աստուծոյ: Ըստ եկեղեցւոյ սուրբ հայրերուն՝ հրեշտակները, իբրեւ լուսեղէն էակներ, ստեղծուած են արարչագործութեան առաջին օրը՝ լոյսի հետ միասին: Աստուծոյ հրահանգով անոնք կոչուած են սպասաւորելու մարդ արարածին: Հետեւաբար անոնք սպասաւոր հոգիներ են, որոնք երկնաբնակ ըլլալով հանդերձ, իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ երկրաւոր կեանքի ընթացքին, կը գործեն ժամանակի եւ տարածքի մէջ ապրող մարդու հետ, մարդու համար: Հրեշտակներուն կ'անուանեն նաեւ Աստուծոյ պատգամա-ւորներ, որոնք կ'իրականացնեն Տիրոջ կամքը: Ս. Գիրքը կը վկայէ, որ անոնք բազմաքանակ են: Ըստ Ս. Դիոնիսիոս Արիսպագացիի՝ հրեշտակները ունին ինը դասակարգ՝ Աթոռներ, Զերովքէներ, Սերովքէներ, Տերութիւններ, Զօրու-թիւններ, Իշխանութիւններ, Պետութիւններ, Հրեշտակապետեր եւ Հրեշ-տակներ:

Գաբրիել անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Հայր», Բարձրեայի ամփջական պաշտօնեան է, որուն վերապահուած է Տիրոջ վերին խորհուրդները անտարանելու շնորհքը: Այս հրեշտակապետը, որ ուղարկուած էր Տիրոջ կողմէն, Ս. Կոյս Մարիամին բարի լուրը հաղորդեց, իսկ Չաքարիային՝ Ս. Յովհաննէս Սկրտիչի ծննդեան անտիպը:

Միքայել անունը, որ կը նշանակէ «Ո՛վ է Աստուծոյ նման», երկնաւոր Արքայի փառքին եւ անոր ժողովուրդին պաշտպանութեան համար մարտնչողն է, որուն տրուած է կառավարելու եւ թագաւորելու շնորհքը: Միքայել հրեշտակապետին անունը չորս անգամ վկայակոչուած է Ս. Գիրքին մէջ: (Դան. Ժ 13, ԺԲ 1, Յուդ. Ա 9, Յայտ. ԺԲ 7):

HOLIDAYS



Saturday November 9, 2019

COMMEMORATION OF ARCHANGELS

GABRIEL AND MICHAEL

AND THE ENTIRE HEAVENLY CLASS

According to the Angelology of the Armenian Church the angels are unfleshly, spiritual, independent, always moving, asexual, immortal creatures and God's servants. According to Church Fathers, the angels, as luminous creatures, have been created the first day of Creation, together with the light. By the God's order they are servants, they have been created to serve the human being. Therefore, they are servants who

despite their being dyophysite, participate in the earthly life, act together with the human being living in time and space, they act for the human being. The angels are called the messengers and agents of God, who realize God's will. According to Dionysius of Areopagus (Areopagite), there are nine orders of angels – Angels, Archangels, Virtues, Powers, Principalities, Dominations, Throne, Cherubim and Seraphim.

Archangel Gabriel, whose name means "God's man", is God's direct servant, who is granted the grace to evangelize the Lord's mysteries. It was Archangel Gabriel, who was sent by the Lord to bring the good news to the Virgin about the birth of the Savior, and to Zechariah – to bring the good news about the birth of John the Baptist.

Archangel Michael, whose name means "Who is like God?", is the advocate for the Heavenly King's glory and His people's protection, who is granted the virtue to govern and rule. The name of Archangel Michael is mentioned in the Holy Scriptures for four times (The Book of Daniel, 10:13, 12:1, The Letter from Jude 1:9, The Revelation to John 11:7).



ԱՐ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացուի, որ Հոգեհանգստեան Պաշտօն ինդրելու համար Եկեղեցի հեռաձայնել առնուազն մինչեւ Հինգշաբթի կ.ե. ժամը 5 եւ նախընտրաբար պահանջուած հոգեհանգիստի թուականէն մէկ շաբաթ առաջ:

Ե-Հասցեով (e-mail) ինդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ այլ ինդրանք պէտք է **հաստատուին եւ վերստուգուին** քարտուղարութեան հետ **հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:**

Շնորհակալութիւն
Եկեղեցւոյ Գրասենեակ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
ԿԻՐԱԿԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐ 2019**



Պրն. Յակոբ Արթինեանի,
Տ. եւ Տիկ. Ռաֆֆի եւ Ալին Սօսոյեանի եւ զաւակներուն՝
Սելինի եւ Սապրինայի,
Տ. եւ Տիկ. Ռաֆֆի եւ Լորա Կարապետեանի եւ
դուստրին՝ Սեւանայի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝
ԺՈՒՍԹԻՆ ԱՐԹԻՆԵԱՆԻ

(JUSTINE ARTINIAN)

Մահուան 4-րդ տարելիցին առիթով



Տիկ. Պերճուհի Սօզքէսի,
Հենիքա Սօզքէսի,
Սրբուհի Սօզքէսի,
Թագւոր Ալթանի,
Գարինա Ալթանի,
Ալին Քըրրմլիի,
Եսզմին Քըրրմլիի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԳԷՈՐԳ ՍՕՉՔԷՍԻ

(KEVORK SOZKES)

Մահուան 4-րդ տարելիցին առիթով



Տիկ. Մարկո Մանիքեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի՝

ՎԱՐՂԱՆ ՄԱՆԻՔԵԱՆԻ
(VARTAN MANIKIAN)

Մահուան 22-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

ՄԱՆԻՔԵԱՆ ԵՒ ՄԱԶԼՈՒՄԵԱՆ
(MANIKIAN & MAZLOUMIAN)

Համայն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ



ՅԱԻԱԿՏԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդակիստ Մայր Տաճարի
Յոգեւոր Յովիւն ու Ծխական Խորհուրդը
իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն
Աքքելեան եւ Հաճար ընտանիքներուն՝

Ողբացեալ

ԱՄԺԷԼ Աքքելեան – Հաճարի

մահուան տխուր առիթով (6 Նոյեմբեր 2019):



The Parish Priest and the Parish Council
of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral
express their deepest condolences to the Akkelian and Hajjar families
on the loss of their beloved:

Angele Akkelian-Hajjar (November 6, 2019).

ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

PÂTISSERIE AFRODITI

756 Rue Saint-Roch, Montréal, QC H3N 1L3

Mr. Haik Yasa \$200, Mr. Manvel Markosyan \$100.

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE MARO MAZMAMYAN-SEVUNTS:

Mrs. Hasmik Saroukhanian \$50.

HOKEHANKISD:

THE LATE NATAN MENENDYAN:

Mr. & Mrs. Andranik Ohanjanian \$50.

THE LATE VARTAN MANIKIAN:

Mr. Levon Seferyan \$75, Mr. Hovsep Doramajian \$60,

Mrs. Margo Manikian, Mrs. Najda Menendyan \$50.

THE LATE MARO MAZMANYAN - SEVUNTS:

Mr. & Mrs. Levon Sevunts \$50.

THE LATE ARUSYAK GURNAGUL:

Mr. & Mrs. Norayr & Paylin Gurnagul, Mrs. Siruhi Migirditsian \$100,

Mr. & Mrs. Robert Kilaavuz \$25.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը կարիքն ունի
ուսուցիչներու դասաւանդելու համար գծագրութեան
դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել

քարտուղարութեան՝ (514) 279-3066

տուեալները ուղարկել հետեւեալ Ե-Հասցէին

stgregorychurch@gmail.com

Շնորհակալութիւն



ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

**Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք՝
Թէ Ձեր ինքնաշարժերը ապահով կերպով կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող**

**Centre Education des Adultes Outremont դպրոցին
կայանատեղիին (parking)-ին մէջ:**

Հասցէն կարելի է տեսնել ստորեւ կցուած յայտարարութեան մէջ:

**Նաեւ՝ կարելի է օգտագործել Stuart պողոտային կից գտնուող
Հիւսիսային Lajoie փողոցին երկու կողմերը:**

Շնորհակալութիւն

Ծխական Խորհուրդ

PARKING

**We would like to inform you that
you can safely park your cars**

In the parking lot of the

Center Education des Adultes Outremont School

on Bernard street.

The address can be found in the attached map below.

You can also park on both sides of North Lajoie Street

adjacent to Stuart .

Thank you

Parish Council



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GREGOIRE L'ILLUMINEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the "Centre d'Éducation des Adultes Outremont". The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2



ՄՈՆԹՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ



ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐԾ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱԶՅՅՈՑ ԹԵՄԻ

ՀԱՄԵՐԳ ԼՈՒԲՈՒԲՏ

ՀԱՆՃԱՐԵՂ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ԾՆԵԴՆԱԼ 150 ԱՄԵԱԿԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
Ելոյթ կ'ունենան հանրաժանօթ
արուեստագետներ

**Շաբաթ, 30 Նոյեմբեր
2019 երեկոյեան ժամը
8-ին**

ԵԿԵՂԵՍՈՂ ՄԵԶ:

Հանդիսութեան ակարտին՝
հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան»
սրահին մէջ:
Մանրամասնութեան համար հեռաձայնել
(514) 279-3066

Ողջ հասոյթը կը յատկացուի
Վերանորոգութեան Դրամարշալին:
Մուտքի նուէր՝ \$30



Մաշա Ճիհանեան



Մարգիս Պարսէմեան



Գոհար Մանուկեան



Cathédrale St. Grégoire l'Illuminateur à Outremont



Sous le patronage de Son Éminence
Monseigneur Abgar Hovakimyan, Primat du
Diocèse Arménien au Canada

Concert Dédié

Au prestigieux Prêtre Komitas,
Organisé par le Conseil Paroissial

À l'occasion du 150^{ième} anniversaire de
naissance

Avec la participation des
artistes renommés

Samedi, le 30
novembre 2019 à
20:00 à l'église
St. Grégoire

Légers collations seront servies
après le concert dans la Salle
Vatché Hovsepian
Pour plus de détails, svp appeler à
(514) 279-3066
Admission : \$30



Sasha Djhanian



Sarkis Barsemian



Gohar Manvelyan

49

թղթի



ՄԻԳՐԱՆՏ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՆԱՐ



ՏԱՐԵԴԱՐՁ

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

ANNIVERSARY

of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Հովանաւորութեամբ

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019

Sunday, December 15th, 2019

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Պատարագի՝

Առաջնորդ Սրբազան Հայր

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական Յայտագիր
«Մարի Մանուկեան» սրահին մէջ

Anniversary Banquet & Cultural Program in «Marie Manoogian» Hall


Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել

Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

Մինչեւ 10 Դեկտեմբեր 2019

Please call to reserve (514) 279-3066

till December 10th, 2019





Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Սոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ _____
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատորակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել _____ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:

- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը ըննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել

Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն

անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արծանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Մեր երեխաներուն համար
Պահպանե՛նք ժառանգութիւնը, կերտե՛նք
ապագան**

**Սոնթրեալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ եկեղեցին շտապ
վերանորոգման կարիքն ունի:**

**Ճարտարապետական ուսումնասիրութիւնները
ի յայտ բերին թէ եկեղեցւոյ արտաքին
շաղախներն ու ենթակառոյցները անմիջական
վերանորոգման կը կարօտին: Յառաջիկայ հինգ
տարիներու ընթացքին, գաղութս պետք է
հաւաքէ բաւական նշանակալի գումար մը: Իսկ
այս առաջին փուլը կը կարօտի \$ 250,000 ի:
Շտապ:**

**Եկե՛ք միասնաբար ապահովե՛նք մեր գաղութի
ապագան:**



POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes

restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à \$250,000 a déjà démarré

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire



Օրինութեամբ Գանատահայոց Թեմի Բարեխնամ
Առաջնորդ Գերաշնորհ
Տէր Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի
Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ

«Կոմիտաս» Դպրաց Դասը
Յունուար 2020-ին կը նախատեսէ
կազմակերպել

«ԿԱՏԱԿ ԵՐԳ»

խորագրով երեկոյ մը

Յայտագիրը կը պարունակէ.

- հայկական ժողովրդական,
սիրային եւ կատակերգի ճոխ
երգացանկ մը,

որ պիտի ներկայացուի

գեղարուեստական բեմադրութեամբ:

- Յայտագրի ընթացքին պիտի մատուցուի
հայկական աւանդական ուտեստ եւ հայկական զինի:

Յայտագրին մաս կազմել փափաքողները
մինչեւ 15 Հոկտեմբեր 2019

կրնան դիմել «Կոմիտաս» Դպրաց Դասի խմբավար
Տիար Սարգիս Պարսեմեանին՝ [**Barsemians@gmail.com**](mailto:Barsemians@gmail.com)



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

**ԱՄԵՆ Հինգշաբթի
երեկոյեան՝ ժամը 7:00-ին Եկեղեցւոյ մէջ**

**Études bibliques et discussions
avec le R.P David Margaryan**

**Chaque Jeudi à 19h00
à l'église**

**Կը հրաւիրենք մեր սիրելի
հաւատացեալները մասնակից ըլլալու
Աստուածաշնչական Նիւթերուն**

**Nous invitons nos chers fidèles à participer à ces
séances d'interprétations bibliques.**

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն
Une collation de café et de thé est servie**

**Ի սրտէ կ'անկալենք բոլորին
Ներկայութիւնը**

**Nous comptons sur votre
participation massive**



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**



Միրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 30 Նոյեմբեր 2019-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Մոնթրէալի Մբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

*Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*